ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1

ք. Երևան «24» 05. 2018թ.

«ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը», գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության պետ Ռ.Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Ավետիսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ. օգոստոսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 33000000 (երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Վարդանանց 8
ՖՆ աշխատակազմի գործառնական	«ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
վարչություն	Մասիս մ/6
Հ/Հ 900011619784	Հ/Հ 220163331048000
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 04226514
Ծառայության պետ՝	Տնօրեն՝
Ռ.Հովհաննիսյան	Հ.Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«24» 05. 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ԱՆ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հազար ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	Արտաքին կոյուղու ցանց				**23165,076**
1	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 8սմ հաստությամբ	մ³	51,0	13,25	675,750
2	Խճի շերտի քանդում	մ³	97,0	3,31	321,070
3	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	291,0	3,31	963,210
4	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ³	190,0	0,83	157,700
5	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք /514+91/մ3	մ³	605,0	0,83	502,150
6	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	50,0	4,14	207,000
7	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /91+16/մ3	մ³	107,0	3,31	354,170
8	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	107,0	0,83	88,810
9	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ³	600,0	0,25	150,000
10	Բնահողի տոփանում	մ³	707,0	0,83	586,810
11	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	190,0	4,14	786,600
12	Գույքային վահաններով խրամուղու պատերի ամրացում և քանդում / բնահող /	մ³	**762,0**	2,49	1897,380
13	Պոլիէթիլենային ծալքավոր խողովակների տեղադրում Φ315x7.6մմ, փորձարկումով, սեղմիչ օղակներով	գմ	398,0	14,08	5603,840
14	Նույնը Φ225x5.4մմ,	գմ	142,0	12,43	1765,060
15	Ե/բետոնե հավաքովի էլեմենտներից կոյուղու կլոր դիտահորի պատրաստում Φ1,0մ /35հատ/	մ³	30,9	99,41	3071,769
16	,,Ա,, իտահորի համար նոր ե/բ կափարիչի տեղադրում /գործող դիտահոր/	հատ	1,0	57,99	57,990
17	Դիտահորի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ²	297,0	1,65	490,050
18	Պողպատե պատյանի տեղադրում դիտահորերում D=300մմ, L=0.17մ, 71 հատ	գմ	12,1	0,83	10,043
19	Թուջե մտոց	հատ	35,0	57,99	2029,650
20	Միացում գործող ցանցին տրամագիծը կապ չունի	տեղ	9,0	12,43	111,870
21	Հորի մետաղական աստիճանի տեղադրում	տն	0,105	497,03	52,188
22	Դիտահորի ամրացման մետաղական մասեր	տն	0,3	579,87	173,961
23	Մետաղական աստիճանների և ամրացնող դետալների յուղաներկում 2 շերտ	մ²	25,0	0,83	20,750
24	Խճի շերտի պատրաստում 20սմ հաստությամբ	մ²	370,0	1,65	610,500
25	Խոշորահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	370,0	4,14	1531,800
26	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 3սմ հաստությամբ	մ²	370,0	2,49	921,300
27	Բետոնե եզրաքարերի քանդում և վերատեղադրում բետոնե հիմքով	գմ	9,5	2,49	23,655

	Կենտրոնական մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				**2724,346**
1	Առկա բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 33.6մ2	մ³	5,0	9,94	49,700
2	8սմ հաստությամբ միջնապատերի քանդում 15մ2	մ³	1,2	4,97	5,964
3	d=100 մմ թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	9,0	0,25	2,250
4	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	12,0	2,49	29,880
5	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 33.6մ2, 15սմ հաստությամբ	մ³	5,0	28,99	144,950
6	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	15,0	2,90	43,500
7	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,03	579,87	17,396
8	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողլիցք	մ³	84,0	0,41	34,440
9	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	92,0	3,31	304,520
10	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	153,0	0,41	62,730
11	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	41,4	2,49	103,086
12	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	23,0	4,14	95,220
13	Պոլիէթիլենայինծալքավոր խողովակների տեղադրում Φ150մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,0	2,49	311,250
14	Պոլիէթիլենայինծալքավոր խողովակների տեղադրում Φ100մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,0	1,66	207,500
15	Պոլիէթիլենային ձևավոր մասեր /d=100-150/մմ անցում, թեքում, մաքրիչ	հատ	40,0	2,49	99,600
16	Նույնը եռաբաշխիչ /d=100x50/մմ	հատ	20,0	1,66	33,200
17	Նույնը /d=100x100/մմ	հատ	30,0	2,49	74,700
18	Ստուգիչ կանգնակի վրա	հատ	10,0	1,65	16,500
19	Միացում կոյուղագծին	տեղ	40,0	4,14	165,600
20	Էլեկտրական թուջե փական 30ч9066р D=100մմ	հատ	10,0	57,80	578,000
21	Պ/էթիլենային կցաշուրթ D=100մմ	հատ	30,0	4,14	124,200
22	Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ100մմ	հատ	30,0	4,14	124,200
23	Պողպատե կցաշուրթավոր խլացուցիչ տվիչի համար Φ100մմ	հատ	10,0	4,14	41,400
24	Ներքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ²	22,0	1,65	36,300
25	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	22,0	0,83	18,260
	N6 մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				**192,111**
1	Առկա d=108x3մմ պողպատե խողովակի 2շերտ լուղաներկում	մ²	5,0	1,24	6,200
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	13,0	1,65	21,450
3	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=100մմ	հատ	9,0	2,49	22,410
4	Պողպատե ձեվավոր մասերի տեղադրում D 100 մմ	տ	0,016	579,87	9,278
5	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0.6մ, 3 հատ	գմ	1,8	14,91	26,838
6	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	7,0	3,31	23,170
7	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	7,0	0,50	3,500
8	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	0,6	4,14	2,484
9	Միացում կոյուղագծին	տեղ	11,0	4,14	45,540
10	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 1.5մ2	մ³	0,225	13,25	2,981
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,42	2,49	1,046
12	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 1.5մ2, 15սմ հաստությամբ	մ³	0,225	35,618	8,014

13	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,0	5,80	11,600
14	Ծածկերում անցքերի բացում d=100մմ	տեղ	4,0	1,65	6,600
15	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	4,0	0,25	1,000
	Ճաշարանի մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				**208,747**
1	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	5,0	0,83	4,150
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	29,0	1,65	47,850
3	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=100մմ	հատ	13,0	1,65	21,450
4	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0,6մ, 2հատ	գմ	1,2	14,91	17,892
5	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	8,0	3,31	26,480
6	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	8,0	0,41	3,280
7	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ^3	1,6	4,14	6,624
8	Միացում կոյուղագծին	տեղ	9,0	4,14	37,260
9	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 2մ^2	մ^3	0,3	13,25	3,975
10	Կերամիկ սալերից հատակների քանդում	մ^2	1,2	0,25	0,300
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,6	2,49	1,494
12	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 2մ2, 15սմ հաստությամբ	մ^3	0,3	37,28	11,184
13	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ^2	1,2	9,94	11,928
14	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,0	4,14	8,280
15	Ծածկերում անցքերի բացում d=100մմ	տեղ	4,0	1,65	6,600
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				**1209,720**
1	Լուսավորության վահանակ 558x350x990 32 մոդուլ	հատ	2,0	37,44	74,880
2	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 63Ա	հատ	2,0	6,63	13,260
3	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	12,0	4,14	49,680
4	ВВГ 5x16մմ մալուխների անցկացում	գմ	10,0	1,65	16,500
5	ВВГ 5x6մմ մալուխների անցկացում	գմ	340,0	0,83	282,200
6	Ճկախողովակ D20մմ	գմ	30,0	0,25	7,500
7	Մետաղական խողովակ D50մմ L=3մ	գմ	30,0	1,49	44,700
8	Մալուխի ամրակներ	հատ	300,0	0,33	99,000
9	Ջրահեռացման համակարգի կոմպլեկտ սարքավորում /ներառյալ ավտոմատիկայի վահանակ, կառավարման մալուխներ, 2 տվիչ/	կ-տ	10,0	62,20	622,000
	Ընդամենը				**27500,000**
	ԱԱՀ	**20%**			**5500,000**
	Ընդամենը				**33000,000**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Երևան Նուբարաշենի խճուղի 2 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011019784
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 8
«ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Մասիս մ/6
Հ/Հ 220163331048000
ՀՎՀՀ 04226514

Տնօրեն՝
Հ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«24» 05. 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱՆ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Արտաքին կոյուղու ցանց**	Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ
2	**Կենտրոնական մասնաշենքի ներքին կոյուղու ցանց**	Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ
3	**N6 մասնաշենքի ներքին կոյուղու ցանց**	Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ
4	**Ճաշարանի մասնաշենքի ներքին կոյուղու ցանց**	Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ
5	**Էլեկտրատեխնիկական աշխատանքներ**	Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից	31.08.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019784
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ռ.Հովհաննիսյան

Ստորագրություն
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 8
«ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Մասիս մ/6
Հ/Հ 220163331048000
ՀՎՀՀ 04226514
Տնօրեն՝
Հ.Ավետիսյան

Ստորագրություն
L.S.

Հավելված թիվ 3
« 24 » 05. 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	45611300/3	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներ	0	0	33000000	33000000	33000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019784
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ
Ռ.Հովհաննիսյան
Ստորագրություն
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 8
«ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Մասիս մ/ճ
Հ/Հ 220163331048000
ՀՎՀՀ 04226514
Տնօրեն՝
Հ.Ավետիսյան
Ստորագրություն
Կ.Տ.

Հավելված N 4
«24» «05» 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
« 24 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն